

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ  
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



**Մարզկենտրոնը՝**  
ք. Եղեգնաձոր

**Տարածաշրջանները՝**  
Վայք  
Եղեգնաձոր

**Քաղաքները՝**  
Եղեգնաձոր  
Վայք  
Ջերմուկ

Տարածքը	2 308 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը , %	7.8
Համայնքներ, 2020թ. տարեկգրի դրությամբ	8
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2020թ. տարեկգրի դրությամբ	48.5 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	17.1 հազ. մարդ
գյուղական	31.4 հազ. մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ.,%	1.7
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ.,%	35.3
Գյուղատնտեսական նշանակության հողեր	189 600.6 հա
այդ թվում՝ վարելահողեր	15 741.8 հա

Վայոց ձորի մարզը գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով սահմանակից է Նախիջևանին: Հյուսիսում սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հարավում՝ Սյունիքի մարզին, արևմուտքում՝ Արարատի մարզին և արևելքում՝ Արցախին:

Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատկերներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7 %-ը կամ 13 240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, զոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն ջերմաստիճանը հարավային շրջաններում հասնում է +41°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35°C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2019թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտներ ընդհանուր ծավալում կազմել են.

<input type="checkbox"/>	արդյունաբերություն՝	1.3%,
<input type="checkbox"/>	գյուղատնտեսություն՝	2.5%,
<input type="checkbox"/>	շինարարություն՝	1.5%,
<input type="checkbox"/>	մանրածախ առևտուր՝	0.5%,
<input type="checkbox"/>	ծառայություններ՝	0.6%:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5 %-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խմիչքների՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում Հայաստանի Հանրապետությունն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարները:

Եղեգնաձոր քաղաքը (2020թ. տարեսկզբին 7.4 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

Եղեգնաձոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են արդյունաբերությունն ու շինարարությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:

Վայք քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 5.6 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:


Վայք քաղաքի տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են հանքային ջրերի և շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:

Ջերմուկ քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 4.1 հազ. բնակիչ) գտնվում է 2 070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք:

Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

Ջերմուկ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը «Ջերմուկ» հանքային ջրի, արտադրությունն է:

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,  
2020թ. հունվարի 1-ի դրությամբ**



**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	303	301	295	301	361
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	258	250	240	251	310
կրպակներ	19	26	28	23	25
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	-	-	-	-	-
առևտրի այլ օբյեկտներ	25	24	26	26	25

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Պետական նախադպրոցական	15	17	31	31	33
Պետական հանրակրթական	50	50	48	48	48
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	8	8	8	8	8

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	1	1	1	1	1
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	-	-	-
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	1	1	1	1	1

**ՔԱՂԱՔՆԵՐ**

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>2</sup>
Եղեգնաձոր	7 358
Վայք	5 592
Ջերմուկ	4 136

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

## ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup>
<b>Եղեգնաձորի տարածաշրջան</b>		
1	Ագարակաձոր	1 351
2	Աղավնաձոր	1 946
3	Աղնջաձոր	410
4	Արենի	1 950
5	Ամաղու	-
6	Արտաբույնք	805
7	Արփի	1 122
8	Գետափ	2 251
9	Գլաձոր	2 541
10	Գնիշիկ	68
11	Մոզրով	97
12	Գողթանիկ	176
13	Ելփին	1 247
14	Եղեգիս	297
15	Թառաթումբ	450
16	Խաչիկ	920
17	Հերմոն	177
18	Արատես	-
19	Կալասար	-
20	Հորբատեղ	248
21	Հորս	214
22	Մալիշկա	5 071
23	Շատին	1 813
24	Չիվա	813
25	Ռինդ	1 505
26	Սայլի	256
27	Վարդահովիտ	189
28	Գետիկվանք	-
29	Սևաժայռ	30
30	Վերնաշեն	1 123
31	Քարագլուխ	801
<b>Վալթի տարածաշրջան</b>		
1	Ագատեկ	554
2	Արին	278
3	Արտավան	258
4	Ախտա	-
5	Բարձրունի	350
6	Գնդեվազ	679
7	Գոմք	144
8	Զառիթափ	1 383
9	Զեղեա	139
10	Կապույտ	35
11	Հորաղիս	-
12	Խնձորուտ	467
13	Կարմրաշեն	207

<sup>1</sup> ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 954 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ռստիկանության (ճշգրտված՝ տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով) վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2020թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +10.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup>	
14	Կեչուտ	Kechut	912
15	Հերիեր	Herher	617
16	Մարտիրոս	Martiros	580
17	Նոր Ազնաբերդ	Nor Aznaberd	122
18	Սարավան	Saravan	204
19	Ուղեձոր	Ughedzor	-
20	Սերս	Sers	188
21	Փոռ	Por	129

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2019թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանաչք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 235	4 765
Ծնվածներ, մարդ	103	48	55
Մահացածներ, մարդ	98	50	48
Ամուսնություններ	47	X	X
Ամուսնալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	40.3	X	X
<b>Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝</b>			
նախադպրոցական	276	135	141
հանրակրթական	1 323	622	701
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	238	151	87
նախնական մասնագիտական (արհեստագործական)	15	4	11
միջին մասնագիտական	36	14	22
բարձրագույն մասնագիտական	49	26	23
<b>Առողջապահության ոլորտ՝</b>			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	37 465	...	...
Մարզիկներ, մարդ	395	71	324
Զբաղվածներ, մարդ	2 202	788	1 414
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	145	121	24
բժիշկներ	23	...	...
միջին բուժանձնակազմ	44	...	...
Գործազուրկներ, մարդ	627	286	341
<b>Սոցիալական ապահովության ոլորտ</b>			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 893	1 100	793
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	368	X	X
<b>Հաճախումների քանակը տարվա ընթացքում</b>			
գրադարան	14 608	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	648	...	...
<b>Իրավական ոլորտ</b>			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	49	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	26	X	X
միջին ծանրության	18	X	X
ծանր	5	X	X
առանձնապես ծանր	-	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: